

## ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՎՆԹԱՅՉ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ուրամնա Դավթյան, Մելանյա Դավթյան, 2006

20-րդ դարի 2-րդ կեսին մարդկությունը լինվին գիտակցելով տնտեսական գործունեության և զարգացման առկա հիմնախնդիրները, սկսում է քայլեր ձեռնարկելու ուրվագծելու և ձևափորելու համարդրկային զարգացման ուղղությամբ կողմնորոշող ուղղությունները: Վերջին երեք տասնամյակներում նշանավոր աճ կարելի է դիտել այդ ուղղությամբ գլոբալ մակարդակով տարվող աշխատանքներում:

1972 թ. Ստոկհոլմում կայացավ ՄԱԿ-ի Համամարդկային Ծրջակա բնական միջավայրի համաժողովը (Ստոկհոլմի համաժողովը), որի նրեք գլխավոր արդյունքներ են հանդիսանում՝ «Գործողությունների ծրագիրը» գլոբալ շրջակա միջավայրի պահպանության համար, ՄԱԿ-ի Ծրջակա միջավայրի Ծրագրի և դրա հետ կապված Ծրջակա Միջավայրի Հիմնադրամի հիմնումը, Համամարդկային Ծրջակա բնական միջավայրի Ստոկհոլմի հռչակագիրը:

1992թ. կայացած ՍԱԿ-ի Ծրջակա միջավայրի և զարգացման համաժողովին (Ոփոյի համաժողով կամ Երկիր մոլորակի զազաքաժողով) հիմնականում ընդունվեցին հետևյալ փաստաթոթերը.

- Ծրջակա Սիջավայրի և Զարգացման Ռեհոյի Հռչակագիրը,
  - Երկու պարտավորեցնող կոնվենցիաներ՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիան և Կլիմայի Փոփոխության կոնվենցիան,
  - *Oryaկարգ-21*, 800-էջանոց հրատարակություն 21-րդ դարում կայուն զարգացման համար,
  - համաձայնագիր Կայուն Զարգացման Հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ՝ Ռեհոյի Համաձայնագրերի և *Oryaկարգ 21*-ի հրագործությը վերահսկելու համար:

1992 թ. ՈՒԽՈՒՄ կայացած գագաթաժողովի ընթացքում միջազգային հանրությունը ընդունեց Օրակարգ 21-ը՝ Կայուն Զարգացման գործողությունների իր նախադեպը չունեցող գլոբալ ծրագիրը: «21-րդ դարի Օրակարգը» նվիրված է շրջակա միջավայրի և զարգացման առաջնահերթ խնդիրներին, որոնց իրագործման համար անհրաժեշտ էր ստեղծել Կայուն զարգացման ազգային խորհուրդներ, մշակել համապատասխան ազգային հայեցակարգ, ուզմավարություն, ծրագրեր: Բայց ամենալավ ուզմավարությունները այնքանով են լավ, որքանով որ իրագործվում են: Տաս տարի անց Յոհաննեսուրգի գագաթաժողովը ներկայացնում է իրական հնարավորություն այսօրվա դեկավարների համար ձեռնարկելու կոնկրետ քայլեր և որոշակիացնելու նշանակալի թիրախներ Օրակարգ 21-ի արդյունավետ իրականացման համար:

1991 թվականին Հայաստանի Հանրապետությունը հռչակելով իր անկախությունը, մուտք գործեց քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի բեկումնային և իհմնական բարեփոխումների փուլ։ Իր անկախության առաջին իսկ օրերից Հանրապետությունը սկսեց ներգրավվել միջազգային կառույցների աշխատանքներին և ակտիվորեն մասնակցել մի շարք գլոբալ և տարածաշրջանային գործընթացներին։ Այսպես, 1992թ. ՀՀ լիարժեք մասնակցի կարգավիճակով մասնակցեց Ռիո դե Ժանեյրոյում կայացած «Երջակա միջավայրի և զարգացման» ՍԱԿ-ի համաշխարհային վեհաժողովին։ Ստորագրելով առաջին բնապահպանական գլոբալ միջազգային համաձայնագրերը՝ «Կիմայի Փոփոխության մասին» շրջանակային և «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիաները, ինչպես նաև ընդունելով Ռիոյի հռչակագիրն ու «Օրակարգ 21-ը», ՀՀ միաժամանակ ստանձնեց որոշակի պարտավորություններ։ Ակնհայտ էր, որ Հայաստանի նման նորանելային պետության համար կայուն զարգացման գաղափարների ներդաշնակեցումը սկզբանական դժվարությունների էր հանդիպելու, ինչը պայմանավորված էր երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակով, ուսուրաների

սակավությամբ և փորձի պակասով: Չնայած այդ բարդություններին, այնուամանայնիվ, Հայաստանում 90-ական թվականներին կայուն զարգացման գաղափարների իրագործման ուղղությամբ զգալի առաջընթաց է նկատվել, մասնավորպես, տնտեսության զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, էներգետիկայի, հանրակրթական և այլ բնագավառներում: Առավել ակտիվ գործողությունները ծավալվեցին 2000թ. հետո:

2001 թվականի օգոստոսից ի վեր, Յոհաննեսրուրգի ազգային նախապատրաստական գործընթացի շրջանակներում ձեռնարկվեցին լայնածավալ միջոցառումներ Կայուն Զարգացման Համաշխարհային զարգարաժողովին Հայաստանի պատշաճ մասնակցությունը ապահովելու նպատակով: Արդյունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց 2001 թվականի հոկտեմբերի 24-ի Ազգային Հանձնաժողովի ստեղծման նպատակով թիվ 1023 որոշումը՝ 2002 թվականի օգոստոսի 26-ից - սեպտեմբերի 4-ի ընկած ժամանակահատվածում Յոհաննեսրուրգում կայանալիք Կայուն զարգացման համաշխարհային զարգարաժողովին Հայաստանի մասնակցելու նպատակով նախապատրաստական աշխատանքների իրականացման համար: Հանձնաժողովը, որի անդամներն էին ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները ակտիվորեն ընդգրկվեցին Գնահատման Ազգային Զեկույցի նախապատրաստման աշխատանքներին և համակարգեցին Rio+10 գնահատման ազգային գործընթացը:

2002թ. գումարվեց Յոհաննեսրուրգի զարգաթաժողովը դեկավար անձանց հասցեագրած ավելի կոնկրետ առաջարկներով, որին Հայաստանը նույնպես մասնակցություն ցուցաբերեց ներկայացնելով Հայաստանի ազգային գնահատման գեկույցը:

Գիտակցելով այն փաստը, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը պետք է ներդաշնակ և ինտեգրված լինի բնական ռեսուրսների կայուն օգտագործման և շրջակա միջավայրի կառավարման հետ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը առանձնակի կարևորություն է բնապահպանական հիմնախնդիրների ընդգրկումը սոցիալ-տնտեսական զարգացման այլ բնագավառների քաղաքական ուղղությունների մշակման և ուղմական մոտեցումների ձևավորման մեջ: Այդ իսկ առումով երկրի ներսում տնտեսության զարգացման ներդաշնակության և ոլորտների ինտեգրման, ինչպես նաև ԿԶ ուղղությամբ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացի միասնական կառավարման և համակարգման նպատակով Կայուն զարգացման ազգային խորհրդի ձևավորումը ճանաչվեց առաջնային: ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1102-Ա որոշմամբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Կայուն զարգացման Ազգային Խորհրդը: Նույն որոշման համաձայն հանձնարարվեց ՀՀ բնապահպանության նախարարին ձևավորել ԿԶ քարտուղարություն՝ Խորհրդի աշխատանքները կազմակերպելու նպատակով: ԿԶ ուղղությամբ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացի միասնական կառավարման և համակարգման ինստիտուտի ձևավորումից հետո պետք է իրականացվի ԿԶ ազգային ուղմակարության մշակումը, ինչը անհրաժեշտ հիմք կիանդիանա հետագա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

Ներկայում Հայաստանը հանդիսանում է միջազգային բնապահպանական 15 կոնվենցիաների և 3 արձանագրությունների Կողմ-Երկիր: Կոնվենցիաներով երկրի ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով մշակում են համապատասխան մեխանիզմներ, որոնց թվում են իրավական ակտերի, գործողությունների պլանների, ուղմակարությունների և դրանց իրականացման հսկողության մոտեցումների մշակումը: ԳԵՀ-ի/ՍՄԿ-ի աջակցությամբ երկիրը մշակել և ներկայացրել է Կիլմայի փոփոխության շրջանակային, Կենսարազմագանության

մասին, Անապատացման դեմ պայքարի, Օգոս քայլայող նյութերից հրաժարվելու, Կայուն օրգանական աղտոտիչների մասին կոնվենցիաների ազգային գործողությունների ծրագրերը, ինչպես նաև բնության հասուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրը, Կենսաանվտանգության ազգային շրջանակային ծրագիրը: 2004-2005 թթ. ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակած «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը» և «Երեք գլոբալ բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ խաչաձևող խնդիրների իրականացման միջոցառումների ցանկը»:

Միաժամանակ, 2003թ. մայիսին կիևում կայացած Շրջակա միջավայրի նախարարների 5-րդ համանկուպական համաժողովի ընթացքում նախարարների կողմից հավանության է արժանացել Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի /ԱԵԿՎ/ երկրների համար Բնապահպանական ռազմավարությունը: 2004թ. հոկտեմբերին Թրիլիսիում կայացած նախարարական համաժողովին քննարկվել է ռազմավարության իրագործման ընթացքը: Քանի որ 2007թ. Բնապահպան կայանալիք 6-րդ նախարարական համաժողովին ԱԵԿՎ երկրները ներկայացնելու են իրենց հաջողությունները և բացթողումները նախկինում ընդունված որոշումների և փաստաթղթերի վերաբերյալ, Հայաստանում մշակվում են միջոցառումներ և գործողություններ նշված ռազմավարության 7 նպատակների իրականացման նպատակով:

Կայուն զարգացման հիմունքներին համահունչ երկրների հետագա զարգացման գործընթացը համաշխարհային մակարդակով արտացոլվում է բազմաթիվ միջազգային նախաձեռնություններում և ծրագրերում: Կայուն զարգացման սկզբունքները հետևողականորեն ընդգրկվում են երկրի զարգացման ծրագրերում: 2002 թ. Յոհաննեսբուրգում կայացած Կայուն Զարգացման համաշխարհային գագաթաժողովին ՀՀ պատվիրակության կողմից ներկայացրած Ազգային գնահատման գեկույցում արտացոլված ազգային հրատապ և կենսական վեց խնդիրներից չորսը՝ բնապահպանական են:

2000թ. սեպտեմբերի Հազարամյակի գագաթաժողովում Հայաստանը ստորագրեց Հազարամյակի Հոչակագիրը, որով միացավ աշխարհի մյուս երկրներին՝ աղքատության կրճատմանը և մարդկային զարգացմանն ուղղված պայքարում, դրանով իսկ ամրագրելով ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած նպատակները: 2003թ. օգոստոսին ՀՀ կառավարությունը հաստատեց «ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որը ներառում է Հազարամյակի հոչակագրով նախատեսվող գրեթե բոլոր նպատակները: Զնայած ԱՀՌ-Ը ըստ էության մեխանիզմ է ՀՉՆ-ների իրագործման համար, սակայն դա չէր հասցեագրում Հայաստանի զարգացման տեղային խնդիրները և մարտահրավերները: Հայաստանում սկսեց արմատավորվել ՀՉՆ տեղայնացման գաղափարախոսությունը, գործընթացի արդյունքում տեղայնացվեցին ՀՉՆ թիրախները և ցուցանիշները՝ ձևավորելով ՀՉՆ ազգային շրջանակը: Տեղայնացվեց նաև ՀՉՆ 7-ը, ինչը իր մեջ ներառում է Սևանա լճի վերականգնման խնդիրը, որն ունի ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային նշանակություն: 2005թ դեկտեմբերին հրատարակվեց Հայաստանում «Հազարամյակի զարգացման նպատակների տեղայնացումը և առաջընթացը»-ի ազգային գեկույցը:

Հաշվի առնելով արդի բնապահպանական գերակայությունները, պահանջները և հնարավորությունները, այդ բվում նաև միջազգային համագործակցության զարգացման շնորհիվ ստեղծված նոր հեռանկարները և պարտավորությունները գլոբալ և տարածաշրջանային մակարդակով առաջացել է

նոր ԾՄՊԳԱԾ մշակման անհրաժեշտություն: Ներկայումս ծավալվում է վերջինիս մշակման շուրջ աշխատանքները: ԾՄՊԱԳԾ-2 սահմաննելու է հստակ առաջնայնությունների որոշակիացում, առավել օպտիմալ համադրություններով ծրագրերի, հայեցակարգների, ինչպես նաև ներդրումային միջոցառումների, տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների հիմքների վրա հիմնված քաղաքականության և ռազմավարություն ուղղությունների մշակումը ի նպաստ Հայաստանի Հանրապետությունում կայուն զարգացման ապահովմանը:

Վերջին տարիների նվաճումներից ուշադրության է արժանի 2004թ հունիսին Հայաստանի ի թիվս այլ Հարավ Կովկասյան երկրների ընդգրկումը ԵՄ «Եվրոպական Հարևանության Քաղաքականության /ENP/» շարքում: 2005-2006թթ. Հայաստանը ԵՄ հետ համատեղ մշակում է Հայաստան-ԵՄ Գործողությունների Ծրագիրը, որտեղ ենթակա երկրի շահերից և առաջնահերթ խնդիրներից ներկայացվել և ամրապնդվելու են Եվրոպայի երկրների միջև ՀՀ բնապահպանական համագործակցության ուղղությունները երկրի կայուն զարգացման ուղղությամբ:

2005 թվականը՝ ՄԱԿ-ի կողմից հոչակված «Կրթությունը կայուն զարգացման համար» տասնամյակի առաջին տարին է: Հայաստանը ակտիվ մասնակցել է ՄԱԿ-ի ԵՏՀ նախաձեռնությամբ կայուն կրթության ռազմավարության մշակմանը: Կայուն զարգացման սկզբունքներին համահունչ կրթական համակարգի ամրապնդման ուղղությամբ աշխատանքները Հայաստանում իրականացվել են դեռևս մինչև 2005 թ.: Այդ գործունեության զարգացման նոր շրջանակներ նախանշեց Վիլնյուս քաղաքում 2005 թ. կայացած շրջակա միջավայրի և կրթության նախարարների համանվարական կոնֆերանսը:

Հայաստանի մասնակցությունը վերոնշյալ միջազգային և համաեվրոպական տարածաշրջանային գործընթացներում և դրա ինտեգրացման զարգացումը վկայում են Հայաստանի պատրաստակամության մասին հետամուտ լինելու կայուն զարգացման գաղափարներին, աջակցելու և ուղղորդվելու վերջին տարիներին երկրի կողմից ընդունված միջազգային/տարածաշրջանային գործընթացների պահանջներով և դրանց հիմնական նպատակների իրագործումով՝ ուղղված գործողությունների հավասարակշռված և համալիր ինտեգրացված քաղաքականության իրականացմանը հանուն ներկա և ապագա սերունդների գոյատևման և կայուն զարգացման:

Արձագանքելով ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթություններին, և, որպես քաղաքացիական հասարակության հետ լայնածավալ խորհրդակցությունների արդյունք, բնապահպանական կառավարման բնագավառում ՄԱԶԾ-ի հիմնական նպատակն է աջակցել կառավարությանը համահունչ դարձնել շրջակա միջավայրի հիմնախնդիրները իր իսկ առջև դրված տնտեսական և սոցիալական նպատակների հետ, ԿԶ գաղափարախոսությանը համապատասխան՝ ՀԶՆ-ներին հասնելու նպատակով: Այս նպատակին հասնելու համար ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը հանձն է առել աջակցել կայուն զարգացման գործընթացի խթանման՝ Կայուն զարգացման ազգային խորհրդի ինստիտուցիոնալ համակարգի և գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական հենքի ստեղծման և հզորությունների ամրապնդման միջոցով: Մասնավորապես, «Կայուն զարգացման ինստիտուցիոնալ համակարգի հզորացում» մեկնարկած ծրագիրը անդրադառնալու է ԿԶԱԽ քարտուղարության կայացմանը և հետագա ամրապնդմանը որպես ԿԶԱԽ-ի աշխատանքների արդյունավետ կազմակերպման և հետագա գործողությունների ծրագրի համակարգման համար անհրաժեշտ հիմք:

## Գործողություններ հանուն Կայուն գարզացման

Ինչպես Ռիո դե Ժանյառի այնպես էլ Յոհաննաբուրգի վեհաժողովը նախանշեցին գարզացման ուղևնիշներ, դրանք ներդաշնակ են կայուն գարզացում գաղափարախոսությանը: Դրանցից կարևորագույններն են

### Պայքար աղքատության դեմ

Մարդկային հասարակությունը վաղուց արդեն, խորին ջրաբաժանով բաժանված է՝ հարուստների և աղքատների: Գնալով ավելի է մեծանում խզումը աղքատ և հարուստ երկրների միջև, սա լուրջ մարտահրավեր է՝ աշխարհում դեմոկրատիայի, խաղաղաւորության, անվտանգության, կենսական համակարգների պահպանման համար:

Զեկուցման մեջ կրնարկվեն աղքատության դեմ պայքարի միջոցառումները և դրանց նշանակությունը: Այդ թվում՝

- Աղքատ երկրների համար ֆինանսական հոսքների, նոր, առաջավոր տեխնոլոգիաների մատչելիության ապահովումը, որը հնարավորություն կտա ապահովել նրանց գարզացումը, առանց քայրանլու կենսական համակարգները (անտառները, հողը, ծովների ձկնային հարստությունները).
- Այնպիսի կենսական պահանջների բավարարումը ինչպիսին է՝ մաքուր ջրի, էներգիայի, սանիտարական վիճակի, մարդավայել կացարանի, առողջապահական սպասարկման, սննդի անվտանգության, կենսաբազմազանության պահպանման պահանջը.
- Կրթության, տնտեսական վերականգնության, կաղըների պատրաստման միջոցառումների իրականացումը

Սպառման և արտադրության անկայուն մոդելների վերանայում  
Կներկայացվի հարուստ և աղքատ երկրների բնակիչներ կողմից էներգիայի, ջրի, սննդի և այլ սպառման առարկաների անհամաշափ, խիստ սակավ օգտագործումը, այն

դեպքում, երբ զարգացած նրկրները մնեն մասամբ շահագործում են աղքատ նրկրների բնական պաշարները:

Կրննարկվի բոլոր նրկրների կողմից սպառման և արտադրության կայուն մողելների օգտագործման անհրաժեշտությունը և շրջակա միջավայրի շահարձման համար ռիփերնենցված պատասխանատվություն կրելու կարգը:

Կրննարկվի ռեսուրսների դեգրադացիայի, աղտոտման և կորուստների մասշտաբների շարունակական կրճատման անհրաժեշտության հարցը, այդ թվաւմ նաև Հայաստանի Հանրապետությունում:

### **Բնական պաշարների պահպանումը և ռազիոնալ օգտագործումը սոցիալ տնտեսական գարգացման նպատակով**

Երկրագնդի բնական պաշարների (պոտենցիալի) սահմանափակության ընկալումը և շրջակա միջավայրի վնրաբերյալ գլորալ մտածողության անհրաժեշտությունը սնրառեն կապված են:

Բոլոր նրկրների, այդ թվում ՀՀ-ն քաղաքացիները պետք է ըմբռնեն, որ նրկրագնդի պաշարները անսպառ չեն: Ամերիկացի Էկոլոգներից մեկը մոլորակը համեմատում է տիեզերանավի հետ: Նրա ուղևորները այդ »նավի« պաշարները պետք է կարողանան ճիշտ հաշվեկշռված օգտագործել, հնարավորինս նրկար գոյատևելու համար:

Ունկնդիրները տեղեկություններ կստանան՝ սպառվող, անսպառ, վնրարտադրվող և չվնրարտադրվող բնական պաշարների վնրաբերյալ:

Կպարզաբանվի, որ չվնրարտադրվող պաշարները նաև հաջորդ սնրունուների սնվականությունն են և մենք իրավունք չունենք դրանք սպառնլ:

### **Գլորալ Էկոհամակարգների պահպանում, դրա նշանակությունը**

Մարդու գործունեությունը գնալով ավելի շատ է ազդում մոլորակի Էկոհամակարգների կայունության առողջության վրա, որոնք ապահովում են նրա տնտեսական գործունեությունն ու բարեկեցությունը: Ըստ կարևոր է՝ ազգային, տարածաշրջանային, միջազգային մակարդակով ապահովել՝ ռեսուրսների համալիր օգտագործումը՝ համամալորակային էկոհամակարգների պահպանման համար:

Հազարամյակի նպատակների շրջանակներում հատկապես կարևոր է համարվում՝

- մաքուր խմելու ջրի խնդիրը, նրա քանակի, որակի ապահովման հարցը, ինչպես նաև ջրօգտագործման քաղաքականության հարցերի կարգավորումը պետությունների և միջազգային կազմակերպությունների մակարդակով:
- Համաշխարհային օվկիանոսի խնդիրը: Կներկայացվի՝ ինչպես օվկիանոսի մաքրության, այնպես էլ մոլորակի պաշարների օգտագործմանը ուղղված միջազգային կոնվենցիանների վերաբերյալ տեղեկատվություն:

**Չեկուցման ընթացքում կանդրադառնանք՝**

- կլիմայի փոփոխության,
- երկրագնդի էկոհամահարգերի վրա՝ արդյունաբերության, գյուղատնտեսության ներգործության,
- անկայուն, խոցելի լեռնային էկոհամակարգերի պահպանման հարցերին:

Հազարամյակի բոլոր մարտահրավերները կքննարկվեն հաշվի առնելով նրանց կապը գենդերային խնդիրների հետ:

**Առանձնահատուկ կքննարկվեն նաև կայուն զարգացման առանձնահատկությունները գլոբալիզացիայի պայմաններում**

### **Կրթություն հանուն կայուն զարգացման;**

Մարդկությունը թևակոխում է քաղաքակրթության զարգացման նոր փուլ: Նոր մոտենցումը պետք է բավարարի երկու հիմնական պահանջներ. 1-ին՝ ապահովել նոր՝ «կայուն կյանքի» բարոյագիտության լայնածավալ տարածումը, խորը ըմբռնումը և դրա սկզբունքների կիրառումը գործնականում:

2-րդ՝ **բնության պահպանությունը և զարգացումը**, համատենին, ինտեգրել մեկը մյուսի մեջ: **Պահպանել** նշանակում է մեր գործողությունները ներդաշնակեցնել Երկրի պոտենցիալի հետ և **զարգացում** նշանակում է հնարավորություն տալ մարդկանց ամենուր վայելել՝ երկար, առողջ, լիարժեք կյանք: Այստեղ կայուն բարը ոչ միայն զարգացման բնութագիրն է, այլ մոլորակի բնության լինելիության չափանիշն է: Երկրի բնությունը պետք է կայուն լինի, որպեսզի ապահովվի մարդկության զարգացումը:

Հանուն կայուն զարգացման կրթությունը պետք է դառնա ոչ միայն կրթական հաստատություններ այլ ամող հասարակության կարևոր խնդիր:

